



## Ա. ՔՈՂԱՆՉՅԱՆ

### ՄԵՐ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՏԾԵՐԸ \*

«Հետաքննութենեն պարզվեցավ .որ Սեռաստիր Ս. Նշան վանքի և Մայր եկեղեցիի թափառոցներուն մեջ պահված հայկական ձեռագրերու պահեստը երևան հանված է զինվորականներու կողմեր, երբ այդ երկու սրբատեղիները վերածվեր են զինվորական ուղմապահեստի:

Հայտնաբերված ձեռագրերը և գրքերը ծախված են թուրք նպարավաճառներուն որպես փաթեթ գործածելու համար»:

Մի այլ ականատեսի պատմածից, տեղեկանում ենք այն մասին, որ Սերաստիայում հայերեն ձեռագրեր են գտնվել նաև առանձին ընտանիքների մոտ, որոնք իրենց ամեն ինչը թողած, իրու իրենց պապերի սրբազն ժառանգություն մինչև ծփրատի ափերն էին իրենց հետ տարել «երկաթագիր գրքերը մեր», իրու ականատեսի սրտահուզգ հուշ, մեջ ենք ընդում ստորև, բնիկ Սերաստացի, այժմ երևանաբռնակ Սեպուհ Լուսարարյանի «Նաև ոտնակու սրբություններ...» խորագրով անտիպ ակնարկից հետևյալ տողերը. «Ես պատանի էի, երբ 1915 թ. հունիսի 22-ին տեղի ունեցավ Սերաստիայի հայության տեղահանումը»:

\* Եարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի №№ թ-է-ից, 1966 թվականի №№ թ-ժ-ից և 1967 թվականի № ե-ից.

Մինչդեռ ամենք մտահոգված էինք, աճապարանքով մեր հետ վերցնելու ինչ որ ճանապարհի ընթացքում խիստ անհրաժեշտ էինք համարում, տատիկս զինակրուց ու մտամոլոր, մերթ անհետանում էր, մերթ մեզ մոտ էր գալիս, առանց որևէ բանի ձեռք տալու, հաճախ ծնկները ծեծելով; Վերջում ես նշմարեցի, որ նա մտավ այն մթնշաղ փոքր սենյակը, ուր պապս ժամանակին պահում էր իր հավաքած ձեռագրի մատյանները. և պարապում կազմարարությամբ; Պապիկի բացակայության ես մերթ մտնում էի գաղտագողի այդ արգելված սենյակը, ուր փայտյաքանդակազարդ մի արկղում պահում էր գրչագիր մատյաններ, որոնց գունագեղ մանրանկարները դիտել իմ մեծագույն հաճույքն էր; Սենյակի խորհրդավորությունը շեշտում էին խոնկի և հնարքույր մագաղաթի միախառնված հոտերը; Պապիս մահից հետո այդ սենյակը այլևս փակ էր, անմատչելի մի սրբության նման; Ահա այդտեղ էր մտնում տատիկս ու դողդոջ ձեռքերով տնտղում էր մատյանները, բայց ամենքը վերցնելու անկարելիությունից հոսանքատ, նորից գալիս էր մեր մոտ, անխոս ու տագնապահար...

Տնից մեր հեռանալու պահին, տատիկս վերջինը դուրս եկավ, կրծքի վրա ինչ-որ մի վերջինը դուրս եկավ, կրծքի վրա ինչ, որ մի բան թաքրած ու լացակումած մի աղոթք մրմնչելով; Մենք ժամանակ չունեցանք

նույնիսկ միմյանց հետ խոսք փոխանակելու, քանի որ զարթինների մարակները շաշում էին գեն ու դեն և պետք է հասնենք մեր թաղաց քշող քարավանին:

...Մի առավոտ, երբ սովորականի պիս սկսեցին շաշել զարթինների մարակները և խուճապն սկսվեց տարագրվողների բազմության մեջ, մայրս ու քույրս արդեն հավաքել էին շալակվելիք ծրաբները. սակայն տատիկը պառկած մնում էր: Հազիվ մի նվլոց լսում էր նրա կապտած շրթներից: Մենք փոթացինք նրա մոտ: Նա կրծքին դրել էր ծոցում պահած մատյանը, որը շշնչալով հանձնեց մորս, որպես ընտանեկան մեր սրբությունը: Մենք լացակումած հազիվ հասցրինք համբուրել նրա ոսկրացած ձեռքերը ու հնուցանք խուճապահար, ժամանակ շունենալով նույնիսկ փակելու մեր հոգեարքի աշքերը, քանի որ նոր արհավիրքներ է, որ մեզ էին սպասում, քույրս շուտով առևանդեցին...

Եփրատի եզրին... հազիվ հասած լալնատարած գետի եղերին, տեսանք զինված թալանչի մի խուժան՝ պատրաստ մեզ է սպասում: Զարթինների արտոնությամբ նրանք մեր վրա խուժեցին և սկսեցին կողոպտել մեր հետին ծրաբը, հանեցին մեր զգմանները, շատերը թողնելով մորից մերկ վիճակում... Ես տեսնում էի, թե ինչպիս ոմանց ծոցից Աղոթագիրը կամ Ավետարան էին հայտնաբերում, ու եթե գտնում էին արծաթաղարդ կողքեր, պոկում էին արծաթեղեն մասը ու մնացալը նետում ավազուտքի վրա: Բաղմաթիվ այդպիսի գրքերի մեջ քիչ չէին նաև մանրանկարներով զարդարած մատաղաթյա գրչագիր մատյանները: Տատիկից վերցրած մեր գրչագիր Ավետարանն էլ խելով մորս կրծքից, նույնպես դեն շպրտեցին:

Գետի դիմացի եզերը փոխադրող քիչ լաստեր կային, որով ստիպված էինք հերթի սպասել: Եսկ լաստերի վրա կուտակված, մերկացված, կմախացած բազմությունից քիչ չէին հուսահատությունից իրանց գետը գցողները, որոնց վրա զարթինները կրակում էին:

Այդ սպասման պահին, ես այլևս անբանացած այդ բոլոր խժդություններից, պաղած աշքերով դիտում էի գետեղերքի երկայինքով ցրիվ տրված մեր դարավոր մշակույթի, այդ գանձերի ողբերդական պատկերը, և հիշում մեր հայրենի տան այն մթնշաղ փոքր սենյակը, ուր, ափա՛զ, լքել էինք մատաղաթյա այնքան թանկագին հատորներ, ու տից կոխան լինելու համար բարձարու թա-

լանշիների...<sup>227</sup>

Եվ այսպիս, Սերաստիայից հայ ձեռագրական բեկորները հասնում էին մինչև Եփրատի ափեր, այնտեղ էին նրանք մեր ժողովրդի լինել թի պինելու դժոխային պահերին և իրեն մեր ապրելու և տոկալու վեհ խորհրդանիշ մեր մեր մեսրոպապատ զրքերը, ինչպիս մեր պատմության երկար ու փշոտ բառություններում, այստեղ ևս անմահության ու հավերժության ներշնչման աղբյուր դառնում դեպի մահ զնացող հայորդիների համար...

Ինչպիս շատ տեղերում, Սերաստիայում ևս տեղահանության նախօրյակին ժողովրդի մեջ համաձարակի նման տարածվել էր գրքեր, թղթեր այրելու և փշացնելու: Պրոֆ. Ռուբեն Բագուայշանը, որի շնորհիվ քաղաքի ամերիկյան վարժանում և կոլեջում հայ լեզվի ու դրականության և հայոց պատմության դասերը մեծ զարկ էին ստացել, այդ շրջանում իրեն նվիրել էր գրքերի հրդիներից գրականության գործին և հնարավորության գեպբում փրկում և բերում ու դեպում էր «սիրական մատենագրան»<sup>228</sup>: Մեզ հայտնի չէ, սակայն, թե արդյոք հնարավը՝ եղավ աղատել հրդեհումից փրկված այց գրքերի գոնե մի մասը, թե ամբողջությամբ նրանք ևս ոչնչացվեցին:

Բումինահայ գրող և Բուխարեստի «Շեֆոր» առաջին հայերեն հանդեսի խմբագիր հանգուցյալ և. Լանիսը իր կյանքին նվիրած գրական մի գործում ևս մանրամասնություններ է հաղորդում Սերաստիայի հայերեն ձեռագիր արդարագույն մասին:

<sup>227</sup> Առիթից օգտվելով խորին շնորհակալություն ենք հայտնում Սերաստիայի մեծարգու Ս. Լուսարայանին և տականդավոր նկարիչ և գրող մեծարգու Առաքել Գայրիկին, ըստինին՝ իր գրան վերոհիշյալ արժեքավոր հուշերի համար, իսկ երկրորդին՝ սույն գրվածքը մեզ տրամադրելուն համար:

<sup>228</sup> Ա. Գարիկյան, նշված աշխատությունը, էջ 193:

<sup>229</sup> Առև Լանիս, Կյանքի վեպը գրվագներով, 1962, Վենետիկ (էջեր 165—167, 181, 184), որ ի միջի այլոց պատմվում է հետեւյալը. «Վ(արդան) Մ(եշտուցյան) դաւով Գալաց և. Լանիսի (գրքում Ահարոն) մոտ առան և. և. Ահարոն. Պորեն նամակ մը առի, որով թեղ նման հին բարեկամ մը կը հայտնե թե թուրք ու բարագոր մը, զահնապես մը, շարդերու ընթացքին թայնած ուկիններով և կարգ մը հաղվազյուտ մագաղաթներով հայ վանքեն վերցված, հաստատված է Քոնսթանց և կը ծախս զրածի վերածելու համար:

— Նամակին մեջ կը հայտնե, թե թուրքը Սերաստիա կողմերեն է և հավանաբար Ս. Նշանի գանքեն, անոր պահանուներեն:

— Այո՛, և կամիցնեն. թե շատ մեծ արժեք կը ներկայացնեն, անսղութ կտորներ են, պետք և փրկել:

Հ. Ն. Ակինյանը Գուշակյան արքեպ.ի ձեռագրացուցակին կցած իր ներածականում, Սեբաստիայի գրչագրերի վերաբերյալ գրում էր հետևյալը. «Ինչ ինչ բեկորներ միայն ինչպես կհավաստե ինձ ար. Սիրունի, հասած են Պոլիս, զորոնք Հայ Արվեստի Տունը ձեռք բերած է մեծագին, և այսպես փրկած կորուստնեն: Անշուշտ մաս մալ անցած են օտարներու ձեռքեր, որոնք երևան պիտի գան ապագային»<sup>230</sup>: Այս խնդրի շուրջ ճշգրիտ տեղեկություններ ունենալու ցանկովթյամբ, մենք դիմեցինք 1965—1966 թթ. Հայաստանում հյուրընկալվող բազմավաստակ դիտնական պրոֆ. Հ. Ճ. Սիրունոն, որը և սիրահոժար կերպով մեզ տրամադրեց իր իսկ ձեռքով գրված հետևյալ բացատրագիրը.

«1922-ի գարնան, երբ Հայ Արվեստի Տունը նոր կազմված էր Պոլս մեջ՝ Պատրիարքարանը պաշտոն տվալ անոր ցուցակագրել Պոլսու եկեղեցիներուն մեջ պահանջամածարժեքավոր իրերը: Հանձնաժողովին մեջ, զոր ստեղծեցինք, արվեստի և հնագիտության բնագավառն տասնյակ մը անձեր կային, ինչպես զոկտ. Վ. Թորգոմյան, Հ. Վարդան Հացունի, պրոֆ. Ա. Խաչարյան, Փանոս Թերյանեղյան, Հովսեփ Երշան, Մեսրոպ և պիկ, Նարոյան, Վահան Էսայան, Երվանդ Պելյան, այս տողերը գրողը, և քանի մը ուրիշներ. Հուցակագրեցինք նախ Պալաթի և Ղալաթիու եկեղեցիներուն մեջ գտնվող հայերեն ձեռագրերը, և հետո բոլոր այն թանկարժեք նյութերը, որոնք պահված էին Մայր եկեղեցվու գանձատունը և զորս մեզ ցուց կու տար Տրդատ քահ. Պոյաճյան, այն ատեն լուսարարապես:

Քանի մը օր շարունակ մենք ցուցակագրեցինք, մեր տեսածներուն առջև ընկճված:

Ս. Նշանի գարավոր վանքը, անկե կողուաված թանկարժեք մազաղաթերը... Հարց ու փորձ անել այդ թուրքին... Հնտարքքրվիլ մազաղաթերու ճակատագրություն:

Սնարանում իրեն Հայ գիմակի տակ ներկայացնողը Սարբին էր, Հայատայց կույր Հուա Արսովի որդին, Հայասպան Սարբին էր. Սարբին, թալանիլլ Ս. Նշան վանքի գրչագրերուն, թանկագին սպաներուն, Սեներերիմ թագավորի գավաղանին ու ահա Հայու անուն առած (Պր. Փիսլիբ-յանը) կը զվարճանա այս Հյուրընկալ ափունքներուն վրա (Քոնսթանցա): Վեպի շարունակության մեջ պատմվում է նաև, որ մի Հայ պատմել է թե նրա մուտք սոտիկանները կապոցներ էին տարել ու նիստա ընկնած էր երևում: Նա Ահարոնի ամբողջ գերդաստանն էր սպանել, ինչպես նաև շատ հայրենակիցների և ահա Ահարոնը զցեց նրան ծովը ու խեղամածան ահա արեց, իր գրեմը լուծելով:

<sup>230</sup> Թ. արքեպոս. Գուշակյան, նշված աշխատության Հ. Ա.-ի առաջարանից:

Իրերուն մեջ՝ զոր այնտեղ գտանք՝ կային, օրինակ, Սեներերիմ թագավորի զահը, կեսարիո Ս. Կարապետի զուոր, հիթիթյան աղյուսներ Պողազ քեռյեն բերված, եկեղեցական թանկարժեք անոթներ, ականակուր շաթալթագեր, մետաղյա կազմեր, և Սեբաստիոն համբավալվոր Աստվածաշունչը՝ Հայ մանրանկարչության շքնաղագույն գլուխ-գործոցներն մին:

Տեղեկություն չունիմ թե ինչ եղան բոլոր այդ գոհարները»<sup>231</sup>:

Այսպիսով ինչպես մյուս, այնպես էլ Սեբաստիայի մեծարժեք Աստվածաշնչի վերաբերյալ, ինչպես երեսում է վերո՞իշյալ տողերից, ոչինչ մեզ հայտնի չէ նրանց հետագա ճակատագրի մասին: Անհրաժեշտ է նշել նաև, որ հիշյալ նկարազարդ համբավալվոր Աստվածաշունչը ըստ երեսությին չի գրանցված Գուշակյան ձեռագրացուցակում:

Սակայն, համեմատաբար ավելի բախտավոր եղած Սեբաստիայի մեր ձեռագրական ծողովածուն, քանի որ բավական թվով գրչագրեր հրաշքով փրկվեցին և այժմ պահպան զանազան վայրերում: Սեբաստիայից փրկած գրչագրերի մասին առաջին տեղեկությունը մեզ հայտնի է 1927 թվականից, երբ Երասմակեմի հայոց Պատրիարքարանի մեջ բրասաղեմի հայոց Պատրիարքարանի պաշտոնաթերթ «Սիրոն» ամսագրում տպագրված լուրերի շարքում կաշը էնք հետևյալը. Ասեբաստիոն Ս. Նշան վանուց 157 կտոր մեծ և փոքր ձեռագիրները կ. Պոլսու Պատրիարքությունու Տ. Սմբատ Ս. Եպիսկ. միջոցով ստացվել են պահպանվելու երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի մատենադարանում<sup>232</sup>: Ըստ մի այլ տեղեկության, որը մենք պարտական ենք Արտավազդ արքեպ. Սյուրմեյանի, 1929 թ. Սեբաստիայից Հալեպ են բերվել 30 գրչագրեր, Մը. Էրնսեստ Պատրիարքի օգնությամբ և որոնք որոշ ժամանակ Հալեպում մնալուց հետո, Մորգում Պատրիարքի գիմունների հետեանքով, Առաջնորդարանը ուղարկել է Երուսաղեմ: Դրանք ևս 1934 թ. հոկտեմբերի 22-ին մուտք գործեցին Սրբոց Հակոբյանց Միաբանության մատենադարանը, և միացան Սեբաստիայի Ս. Նշան վանքից փրկած ձեռագրերին: Սակայն հիշյալ գրչագրերի ծագման հարցը գեռևս որոշված չէ, քանի որ Արտ. արք. Սյուրմեյանի կողմից հիշյալ 30 ձեռագրերից երկուսի մասին գրած նկարագրությունից ինչպես կարելի է եղանակացնել, դրանք ապահովաբար այլ վայրերից է, որ շատ ուշ բեր-

<sup>231</sup> Խորին շնորհակալաթյուն ենք հայտնում պրոֆ. Հ. Ճ. Սիրունուն մեզ տրամադրած վերո՞իշյալ ուղարկավ տեղեկությունների համար:

<sup>232</sup> «Սիրոն», 1927 թ., էջ 320:

վել էին Սերաստիա: Նկարագրված հիշյալ ձեռագրերից առաջինը, զրվել էր Եվլուկիայում 1823 թ. և մի Բժշկարան էր, գրված բժիշկ Նիկողոս Ամթեցու կողմից և, որը սահյան շնոր գտնում Սերաստիայի հայտնի ձեռագրացուցակում: Երկրորդ գրչագիրը՝ «Գիրք հարցմանց»-ն է և ընդօրինակվել է 1607 թ. Հայեպում Տեր Ղազար ք. Զեյթունցիի կողմից: Այս ձեռագիրը ևս Սերաստիայի հայտնի գրչագիրներից չէր, քանի որ ինչպես գրրում է Արտ. արք. Մյուրմեյանը, նրա վրա Սերաստիայի վանքերից ոչ մեկի հնիքը կամ արձանագրությունը չկար և ոռոմե կը հաստատի որ անոր Սերաստիա փոխագրությունը նոր ժամանակի խնդիր է, հավանաբար ընդհանուր տեղահանության օրերուն»<sup>233</sup>:

Նկատի ունենալով մեզ հասած վերոհիշյալ տեղեկությունների երկայնի լինելը և ցարդ հայ ձեռագրագիտության մեջ այս մասին տիրող միանգամայն շատ աղոտ պատկերացումը, այն ճշգրտելու նպատակով, դիմեցինք Երևանաղեմ բազմավաստակ ձեռագրագիտ Գիր. Տ. Նորայր եպիսկ. Պողարյանին, որը և ամենայն աղնվությամբ ճշտեց ոչ միայն Սերաստիայից փրկված գրչագրերի թիվը, այլ և մանրազնին կերպով դրանք համեմատելով Թորոշմ Պատրիարքի հայտնի ձեռագրացուցակի հետ մեր տրամադրության տակ գրեց վերջինիս համապատասխան համարները, որոնք և հրատարակում ենք ստորև: Նրանք թվով 113 են և մուտք են գործել Երևանաղեմի Մատենադարանում 1927 թ. մայիսի 15-ին և նախապես Գուշակյան ձեռագրացուցակում հնտեյալ համարներն են կրել:

1, 4, 6, 7, 12, 13, 19—20, 25, 27—28, 34,  
38—40, 42—43, 49, 53, 56, 58, 60, 62—63,  
65, 67, 70, 73, 81—83, 85, 88—89, 92—93,  
96—98, 100, 104, 108—110, 113, 125—126,  
128—129, 132, 135, 137—138, 141—142,  
156, 159, 161, 163—164, 167, 169—171,  
179—181, 184—189, 191, 193—194, 198—  
199, 201, 203—204, 206—207, 211, 213,  
215, 218—219, 223—225, 227—228, 231,  
236, 242—243, 245—246, 251, 253—254,  
257, 260, 264—267, 272—273, 276—277,  
283:

հնլպես մեզ է հայտնում Գիր. Սրբազնը, «Սերաստի վերաբերյալ վերօգրյալ ձեռագիրներուն հետ միասին տարբեր վայրերի ձեռք բերված ձեռագիրներ ալ ստացված են

Երրուսաղեմ և ամենքը մեկ հաշվված ենք<sup>234</sup>: Ահա այս պատճառով էլ նկատի ունենալով մեր հնագույն վերոհիշյալ տվյալները նախապես մեղ թվացել էր, որ Սերաստիայից փրկված և Երրուսաղեմի հայոց սատենաղարանը փոխադրված ձեռագրերի թիվը եղել էր ավելի մեծ: Ուրախությամբ պնտք է ասել նաև, որ փրկվել ու այժմ Երրուսաղեմի մատենադարանում է գտնվում Սերաստիայի մոտակա Գանկալ կամ Ղանզալ գլուխի երկաթագիր մեծարժեք Ավետարանը, գրված 1041 թվականին և որի անորոշ ճակատագրի մասին ժամանակին այնքան մեծ վշտով արձանագրել էր բանասեր Կ. Գարիկյանը<sup>235</sup>:

Սերաստիայի ձեռագրացուցակի համար 15 գրչագիրը այժմ գտնվում է ԱՄՆ-ի Բալթիմորի Walters Art Gallery-ի 539 համարի տակ: Վերջինս հայերեն ձեռագրերի գոհարներից մեկն է. նրա գրիչն ու նկարիչը եղել է Կիլիկյան հայ մանրանկարչության հանճարեղ ներկայացուցիչ՝ Թորոս Ռուլինը, իսկ կաղմողը՝ Նշանավոր կազմարար Առաքել Հնազանդենը (1262 թ.): Այն գրված է մագաղաթի վրա մեսրոպյան երկաթագրով և շատ հարուստ և ընտառ նկարազարդումներ ունի: Ավետարանում կան 67 մանրանկարներ և 12 խորաններ: Այն Կոստանդին կաթողիկոսի հովանավորությամբ գրված իններորդ ձեռագիրն է և որի ստացողն է եղել վերջինիս եղբորորդի՝ Թորոս քահանան: Գրչագրում հիշվում են Հեթում Ա-ը և Զապել թագուհին: Սույն մեծարժեք ձեռագրից իբրև մայր օրինակ է ծառայել հնուց ի վեր Սերաստիայի և շրջակայի համար: Սերաստիայի Գուշակյան ցուցակի համար 2 ձեռագիր Աստվածաշունչի նոր կտակարանի մասը, ինչպես նաև համար 3 Ավետարանը և ուրիշներ, ինչպես նաև Ենիկանի ձեռագիր մագաղաթյան Ավետարանը ամենայն հավանականությամբ ընդօրինակվել են վերոհիշյալ ձեռագրից, ինչպես որ այդ ցույց են տալիս նկարների, խորանների և լուսանցագարդերի նմանությունները:

Վերջինիս արտանկարված լինելու մասին, վկայում է նաև հայ մանրանկարչության մեծ վարպետ՝ Գարեգին Ա կաթողիկոսը, և որը Սերաստիայից ոչ հեռու հիշյալ գլուղում 1914 թ. տեսել էր այն: Ենի-Խանի ձեռագրից այժմ պահվում է Վաշինգտոնի Freer Galery ու Արթ-ում<sup>236</sup>: Բայց բանասեր Հ. Քյուրտյանի,

<sup>233</sup> Ամենափորին մեր շնորհակալությունն ենք հայտնում Գիր. Ն. Եպիսկ. Պողարյանին մեզ տրամադրած վերաբերյալ հոյժ կարենու տվյալների համար:

<sup>234</sup> Կ. Բարիկյան, Նշված աշխատաթյունը, էջ 133:

<sup>235</sup> Գ. Գարիկյան, Նշված աշխատաթյունը, նյութեր և տումնափորություններ հայ արքեպիսկոպոսի և մշակությի պատմության, պրակ Ա, նյութ-Ցորք, 1943 թ., Հալեպ, էջ 44, 55:

<sup>236</sup> Արտավագդ արքեպոս. Այուրմեյան, Մայր ցուցակ Հայերեն ձեռագրաց Հայեպի և Անթիլիասի ու մասնակության, 1936 թ., Հալեպ, էջ 44, 55:

Սեբաստիայում պահված Ռուսինի այդ նշանավոր Ավետարանը փրկվելով և անմեղսելի կերպով կ. Պուսի Պատրիարքարանին վերադարձվելուց հետո, սրանից շորջ երեսուն տարի առաջ վաճառվել է նախ հույն և նրանից էլ հայ մի հնավաճառի (իմա՞ Տ. Քելեկյան), որն էլ այն վաճառել է ամերիկյան հիշյալ հաստատությանը<sup>237</sup>:

Երեք այլ ձեռագրեր փրկված Սեբաստիայից, այժմ գտնվում են Ամերիկահայ բանասեր Հարություն Քյուրտյանի ձեռագրական հավաքածուում: Առաջինը Գուշակյան ցուցակի համար 22 գրչափր մագաղաթյա երկաթափր Ավետարանն է և որի գրիչն է եղել Կոզմասը: Հիշյալ ձեռագրացուցակում թեև սույն ձեռագրի ժամանակը անհայտ է թողնը-ված, սակայն Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանը այն համարում է ԺԲ գարի վերջում գրված ձեռագիր՝ Երկրորդը՝ նույն ցուցակի 61 համարի տակ գրանցված դարձյալ մագաղաթյա երկաթափր մի Ավետարանն է և որի 97—98 էջերը կրկնափր են և բոլորագրով գրված: Նրա ստեղծման ժամանակը անհայտ է, սակայն ապահովաբար գրված պետք է լինի ոչ ուշ քան ԺԲ—ԺԳ դարերում: Եվ վերջապես երրորդը՝ նույն ցուցակի, համար 134 գրչափր Գանձարանն է ընդօրինակված 1492 թ. Հովհաննես գրչի կողմից Սեբաստիայի Ս. Նշան վանքում<sup>238</sup>:

Այսպիսով Սեբաստիայի ցուցակագրված գրչագրերից այժմ փրկվել են ու մեզ են հայտնի ընդամենը 117 ձեռագրի նույնականության մշակես նշեցինք, Սեբաստիայի շրջանից փրկվել են նաև Ղանդալի և Ենի-Խանի Ավետարանները: Հնարապիր է, որ հետագայում այլ վայրերում գտնվեն նաև Սեբաստիայի հավաքածուին երբեմն պատկանող գրչեր, որոնք գրանցված լինեն մեզ հայտնի ձեռագրացուցակում և կամ նրանից դրսում մնացած լինեն, սակայն մինչ այդ, եթե մենք նկատի ունենանք ցուցակում գրանցված և այժմ մեզ չհասած ձեռագրերի թիվը, ապա պետք է հաշտվենք այն մտքի հետ, որ միայն Գուշակյան ձեռագրացուցակից այժմ պահպասում է 167 գրչափր:

Անհետացած այդ ձեռագրերի մեծ մասը վերաբերում է Սեբաստիայի հոչակալոր Ս. Նշանի վանքին, կան ձեռագրեր նաև Աղտուցի Ս. Հրեշտակապետի վանքից, Ս. Աստվածածին Մայր Եկեղեցուց, Ս. Սարդիս և Ս. Կարապետ Եկեղեցիներից, Սենեքերիմյան ընթերցարանից և այլն: Կորած գրչագրերը ըստ նույնիցին կարգի հետեւալ կերպ կարելի է

<sup>237</sup> «Թագմալիպ», 1966 թ., էջ 69:

<sup>238</sup> Գարեգին Ա կարողիկոս, Հրեշտակապետ ձեռագրաց ...էջ 663:

<sup>239</sup> «Թագմալիպ», նույն տեղում:

դասավորել. ԺԲ գարից՝ 1 ձեռագիր, ԺԳ դարից՝ 2, ԺԴ դարից՝ 11, ԺԵ գարից՝ 17, ԺԶ դարից՝ 8, ԺԷ դարից՝ 33, ԺԸ դարից՝ 26, ԺԹ դարից՝ 10, իսկ մնացածի ժամանակը ըստ ցուցակի՝ անորոշ է: Սեբաստիայի Ս. Նշանի վանքի գուցե և ամենահին ձեռագիրն է եղել ԺԲ դարում գրված և այժմ կորած «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը, որի գրիչն էր Միխար Վարդապետը: Ավելի ուշ այն դարձել է Հայոց Թառ վանքի սեփականությունը: Ձեռագիրը գրված է եղել անցման գրով (Հավանաբար Երկաթագրախառն բոլորագրով) և հայ հնագրության համար ուշագրավ էր նրանով, որ զեր այդ ժամանակվածից բոլորագիրը հիշվում էր գրի կողմից իբրև գրի տեսակ: «ՁՄիխիթար գծող բոլորագրոյս»<sup>240</sup>, գրել է ընդօրինակողը:

Անհետ կորած գրչագրերի մեջ կա մի Աստվածաշունչ ընդօրինակված 1313 թ. Ստեփանոս գրչի կողմից Սեբաստիայում: Կան նաև բազմաթիվ Ավետարաններ, Սաղմոսներ, Մաշտոցներ, Ճաշոցներ, Ժամագրերեր, Պատարագամատուցյաց, Շարակնոցներ, Հայումավորներ, Ճապոնաբերեր, Քարոզագրքեր, Տոնացույցներ, Կանոնագրքեր, և այլն և այլն: Հնագույն գրչագրերից են Սեբաստիայի 16 և 17 համարների տակ գրանցված Ավետարանները, առաջինը գրված է 1272 թ. Գրիգոր գրչի կողմից Երիայում, իսկ Երկրորդը՝ 1295 թ. Կարապետ գրչի կողմից Մալաթիայի Համու զյուղում: Ինչպես փրկված, այնպես էլ ցարդ կորած համարված գրչագրերի կարեսը մասը գրվել է Սեբաստիայում և կարեսը նշանակություն ունի հայ ժողովրդի հնագույն այդ ոստանի ցարդ չգրված գրչագրացիան և մանրանկարչական արվեստի պատմությունը ուսումնասիրելու համար: Սեբաստիահայության մոտավոր անցյալի ուսումնասիրման տեսակետից կարեսը արժեք էին ներկայացնում նաև նույն քաղաքում գրված և նրա գործիչների գրչին պատկանող այն երկասիրությունները, որոնք այժմ կորել են: Այդ շարքից անհրաժեշտ ենք գտնում հիշելու: «Վարք և պատմութիւն Առաքել վ. ի առաջնորդին Սեբաստիայ» (1722—1747 թթ., № 233), «Օրագրութիւն Գրիգոր արքեպ. ի Գաղատացոյ, առաջնորդին հայոց Սեբաստիայ» (1782—1788 թթ., № 234), «Պատմութիւն Ս. Նշանի և առաջնորդաց Սեբաստիայ» (1821 թ., № 235), «Յանկ-ահետակ Կարապետ եպ. ի օրով քահանայից, ժողովրդոց, զպրաց և այլն (№ 240), և այլն:

Սեբաստիայի այժմ կորած ձեռագրերից պետք է հիշատակել հայ միջնադարյան հեղինակներից շատերի գործերը, ինչպես Գա-

<sup>240</sup> թ. արք. Գուշակյան, Նշան աշխատությունը, էջ 101:

վիթ Անհաղթի, Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տաթևացու, Առաքել Սյունեցու, Հակոբ Թոխմաթեցու, Ստեփանոս Լեհացու, Հակոբըն Նալբանի, Պետրոս Աղամալյանի և ուրիշների հեղինակությունները: Նույնպես թարգմանական գրականությունը ևս բավականին հարուստ էր հիշյալ գրչագրերում, նրանց մեջ էին երբեմն գտնվում Եվագրի, Պրոկոփի, Թովման Ազովինացու, Զերոնիմոսի, Ակոթի, Կուռնելիոս Լատինացու և այլոց գործերը: Անհրաժեշտ ենք գանում նաև նշենու, որ բացակա գրչագրերում գտնվում էին նաև մանրանկարներով զարդարված մի շարք ձեռագրեր, հայկական երաժշտության և խաղագիտության տեսակետից արժեքավոր գրչագրեր և այլն: Դարձյալ մի շարք ձեռագրեր սկզբից և վերջից ունեին մեսրոպյան երկաթագրով գրված մագաղաթյա պահպանակներ, որոնց ոչ բոլորն էին վերծանված ցուցակի կազմող Թորգոն արքեպիք. Գուշակյանի կողմից: Ավելացնենք նաև, որ Գուշակյանի ձեռագրացուցակից գույս է մնացել նաև նրա կողմից զենք մեր զարի սկզբներին Սեբաստիայի Ս. Մինաս եկեղեցու դպրոցներում մի ճաշոց գրում գտնված Եղիշեի Վարդանանց պատմության հատակուտրները<sup>21</sup>:

Այժմ, երբ գեռես ոչ մի տեղեկություն չունենք վերոհիշյալ ձեռագրերի մասին, շատ ցանկալի է, որ որքան կարելի է շուտ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Միաբանության կողմից հրատարակության արվեր երջանկահիշատակ Թորգոն՝ Պատրիարքի այնքան խնամքով կազմած Սեբաստիայի ձեռագրացակի 128 ձ'ուագրերի ընդարձակ նկարագրությունը, որոնց կարենը մասը, ինչպես տեսանք այժմ, կորած է: Այդ ոչ միայն հարգանքի մի առողջ կիրանի մատուցված մեծանուն հոգևորականի հիշատակին, այլև կնպաստի մեր կորցրած ձեռագիր ժառանգությունը ավելի լավ ճանաչելու գործին:

Թեև մեր բազմաթիվ գրչության կենտրոններից շատ ավելի բախտավոր եղավ Սեբաստիայի հայերեն ձեռագրերի ժողովածուն, սակայն այստեղ ևս իր շրջականերով հանդերձ պետք է ենթագրել, որ մեր կորցրած գրչագրերի թիվը ամենայն հավանականությամբ պետք է, որ նվազագույնը շուրջ 200 եղած լինի:

(Եարունակելի)

<sup>21</sup>ՏԵ՛ս «Մին», 1931, էջ 210—218: